



ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Ք. Երևան
14 հոկտեմբերի 2021թ.

ԲԴԽ1-Ո-Կ-01

Ո Ր Ո Շ ՈՒ Մ **ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱԿՈՐ ԱՐՇԱԿ ԱԼ ԱՎԵՐԴՅԱՆԻՆ** **ՎԱՐԳԱՊԱՅԱԿԱՆ ՊԱՏԱԽԱՆՍՏՎՈՒ ԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԻ** **ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՄԻՋՆՈՐԴՈՒ ԹՅԱՆ ՔՆՆՈՒ ԹՅԱՆ ԿԱՊԱԿՑՈՒ ԹՅԱՄԲ** **ՆԻՍՏ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱԻՆ**

Բարձրագույն դատական խորհուրդը, ծանոթանալով
Դատավորների ընդհանուր ժողովի Էթիկայի և կարգապահական
հարցերի հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով)`
«Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու
վերաբերյալ միջնորդության մբ Բարձրագույն դատական խորհրդին
դիմելու մասին» 2020 թվականի դեկտեմբերի 03-ի N-Կ-14/2020
որոշմանը և կից ներկայացված փաստաթղթերին,

Պ Ա Ր Չ Ե Ց .

Կարգապահական վարույթ հարուցելու առիթ է հանդիսացել
փաստաբան Ալեքսանդր Ծատինյանի` 01.09.2020 թվականին
Հանձնաժողովին ներկայացրած հաղորդումը:

Ուսումնասիրելով վերոնշյալ հաղորդումը`
Հանձնաժողովը 05.10.2020 թվականին Վարչական դատարանի դատավոր
Արշակ Ալավերդյանի նկատմամբ հարուցել է կարգապահական
վարույթ:

Հանձնաժողովի 03.12.2020 թվականի N-Կ-14/2020 որոշմամբ
միջնորդություն է ներկայացվել Բարձրագույն դատական
խորհրդին` Վարչական դատարանի դատավոր Արշակ Ալավերդյանին

կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ :

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 150-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը Բարձրագույն դատական խորհուրդը քննում է կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին միջնորդությունն ստանալու պահից եռամսյա ժամկետում:

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 84-րդ հոդվածի 11-րդ մասի համաձայն՝ Բարձրագույն դատական խորհրդի նախագահը հրավիրում և վարում է Բարձրագույն դատական խորհրդի նիստերը, ստորագրում է Բարձրագույն դատական խորհրդի որոշումները, ներկայացնում է Բարձրագույն դատական խորհուրդն այլ մարմինների հետ հարաբերություններում, ինչպես նաև իրականացնում է Բարձրագույն դատական խորհրդի բնականոն գործունեության ապահովմանն ուղղված այլ լիազորություններ:

Բարձրագույն դատական խորհրդի աշխատակարգը հաստատելու մասին 22.10.2020թ. թիվ ԲԴԽ-68-Ն-15 որոշման հավելվածի 91-րդ կետի համաձայն՝ խորհրդի նախագահը դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարույթի բուրքային լիազորություն ստանալու պահից մեկամսյա ժամկետում քննարկման համար նշանակում է խորհրդի նիստ: Միջնորդությունը և վարույթի նյութերը խորհրդի անդամներին է ներկայացվում նիստից առնվազն 10 օր առաջ:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 84-րդ հոդվածի 11-րդ մասով, Բարձրագույն դատական խորհրդի աշխատակարգը հաստատելու մասին 22.10.2020թ. թիվ ԲԴԽ-68-Ն-15 որոշման հավելվածի 91-րդ կետով,

Ո Ր Ո Շ Ե Ց .

Հանձնաժողովի կողմից ներկայացված՝ Վարչական դատարանի դատավոր Արշակ Ալավերդյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ միջնորդության քննության կապակցությամբ Բարձրագույն դատական խորհրդի նիստը նշանակել 2021 թվականի հունվարի 25-ին, ժամը 14³⁰-ին՝

Բարձրագույն դատական խորհրդի վարչական շենքում /ք. Երևան,
Կոռյունի 17/:

**ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՐ՝**

Ռ. ՎԱՐԴԱՉԱՐՅԱՆ